

մարդու յարգանքը գրաւած է: Գարձեալ 1754 Ապր. 15 թուականաւ Ս. Քահանայապետը Սարգիս Արքեպիսկոպոսին՝ որ իր հրամանաւ Արեւելք պիտի վերադառնայ, իշխանութիւններ կը շնորհէ (Գիւան Լիվ.), այսպէս ազգականութեան եւ խնամութեան մինչեւ 3^ր աստիճանի (բաղառար) Ս. Պսակի արգելքներէն տնօրինելու, մահուան ժամանակ լիակատար ներողութիւն շնորհելու, եւ ուրիշ ներողութիւններ, եւ այլն:

Այս ատեններն հայ վարդապետներէն ու մանք՝ եպիսկոպոս ձեւանալով Հռոմ կ'երթային, հոն պատիւ եւ դիւրութիւն գտնելու համար, սակայն իրենց խարդախութիւնը Հռոմայ խիստ քննութիւններով երեւան կ'ելլէր: Այսպէս Անտոնեան Միաբան Հ. Պողոս եւ Հ. Գրիգոր վարդապետք կը գրեն 20 Յուլիս 1746 Կ. Պոլսէն ի Լիբանան (Գիւ. Անտ.). «Կարապետ վարդապետ հասակաւ երկայն ալեօք ծեր այս քաղաքս գալոյն ետոյ չունէր վկայական ոչ քահանայութեան եւ ոչ եպիսկոպոսութեան, եկեալ է Հռոմայու որ առնիցէր վկայական լաթին եպիսկոպոսէն եւ այլ կարգաւորացն զի դառնայցէր երկիցս անգամ ի մեծն Հռոմ. յորժամ ետես թէ ոչ եղել որպէս կամի, այժմ այս տեղս ասաց թէ գնամ Հոգեւոր Տիրոջ քովն որ ինքն ինձ ճար արասցէ. զգուշացուցէք Հոգեւոր Տէրն զի մի խաբիցի պատրուական բանիւքն երկրորդ Կարապետ եպիսկոպոսին, որպէս խաբեցաւ Յակոբ ամենապսլծառն առաջին Կարապետ վ. էն. վասն